Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար համազգեստի ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-24/2** ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան,Մամիկոնյանց 46/5

27 մարտի 2024թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Վարդանյան, Ա. Ազարյան, Ա. Թումանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Նազարյան

1. ***Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ***

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Ապրանքի ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)*
1	Համազգեստ	**29 516 400**

2. ***Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ***

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.03.2024թ.-ին ժամը 15:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 26.03.2024թ.-ին ժամը 15:00-ին:

3. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) ըստ չափաբաժինների և հասցեները.***

Հ/հ	*Մասնակցի անվանումները*	*Հասցեներ*
1	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00803554, ք. Երևան, Զ.Սարկավագի 157, kkfactory@rambler.ru , 011- 28 61 90

4. ***Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-24/2 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. ***Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին***

eauction.armeps.am համակարգի միջոցով հրավերով նախատեսված հարցումներ չեն եղել:

6. ***Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ***

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ		
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	Համազգեստ	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	29 516 400	24597000	20 %	29516400	24 350 400	20 %	29 220 480

Աճուրդն ամփոփվել է 26.03.2024թ-ին և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**-ն:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. ***Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին***

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ

Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ մասնավորապես՝

- Ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում տեխնիկական բնութագիրը ենթակա է խմբագրման, տեխնիկական բնութագիր դաշտում պետք է նշել հետևյալ նախադասությունները՝ «***Մանրամասների համար օգտվել ''Հայաստանի***

Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը'' սահմանելու մասին ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն և 23.02.2022թ. թիվ 231-Ն որոշումների դրույթներից: Մատակարարը պարտավոր է իր ֆինասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ էտալոնային փորձագիտական լաբարատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության վերաբերյալ լաբարատոր հետազոտության եզրակացությունները:

- Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուրի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ:
- Արտաքին տեսքը և գործվածքի երանգը նախօրոք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:
- Արտաքին տեսքը պետք է լինի ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հաստատված նմուշի:
- Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր համազգեստի չափսերը վերցնել ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում:
- Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում:
- Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը,արտադրման ամիսն ու տարեթիվը, տեսականու անվանումը և ծառայողի անուն ազգանունը:

Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հասցեների:»

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՋ-24/2** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և 29.03.2024թ.-ին ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 04.04.2024թ. ժամը 15:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 04.04.2024թ. ժամը 15:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 04.04.2024թ. ժամը 15:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ**-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթղթերը:

Հանձնաժողովը որոշեց՝

«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

04.04.2024թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից **«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին** հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Ներսես Վարդանյան

_____ Արմեն Ազարյան

_____ Աննա Թումանյան

քարտուղար՝ _____ Սիրուշ Նազարյան